ված շատ երևույթներ, հետևաբար նաև բանահյուսական տեսակներ

3. Ներկա զրառումների զուգադրումը անցյալ դարի երկրորդ կեսի և մեր դարասկզբի նույն շրջանից զրառած և արդեն հրատարակված նյութերի հետ / Տ.Նավասարդյանի և Ե.Լալայանի/ ցույց են տալիս բանահյուսական նյութերի անխաթարության և հարազատության աստիճանը:

Էսթեր Խեմչյան

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ
/ըստ հեղինակի զրառումների/

1. Շամշադինի շրջանի բնակչությունը արդի վիճակով ազգագրորեն հիմնականում համատարր է, չնայած որ նախնական տեղաշարժերի հետևանքով դեռևս զգալի է երեք շերտ՝ տեղաբնիկներ, նախկին դարաբաղցիներ /XVIII դ.վ./, արևմտահայեր / 1915-20թթ. գաղթածներ/:

2. Շրջանի աշխարհագրական դիրքը, կտրվածությունը արդյունաբերական կենտրոններից զգալիորեն նպաստել են ավանդական բանահյուսության պահպանմանը: Սակայն տեղական բանահյուսությունը բանահավաքների կողմից նվազ ուշադրության է արժանացել: Ըստ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի տվյալների, Շամշադինի շրջանի բանահավաքչության պատմությունը հետևյալ պատկերն է ներկայացնում:

ա/ Մատթեոս Մուրադյանց և Վարդան Տեր-Հարությունյանց-1882-1884թթ.:

բ/ Սարգիս Իսրայելյան - 1945-47 թթ.:

գ/ Արազ Կարապետյան - 1960-ական թվ. /նպատակային/:

դ/ Էսթեր Խեմչյան - 1977-78-79թթ. /նպատակային/:

3. 1977-79թթ. մեր դաշտային աշխատանքների ընթացքում բանահյուսական նյութեր զրանցվեցին 45 բանասացից, որոնք ստորաբաժանվում են հետևյալ սեռա-տարիքային խմբերի՝ 60-100 տարեկան՝ 19 տղամարդ, 14 կին, 30-50 տարեկան՝ 5 տղամարդ, 4 կին: Ուսումնասիրությունը պարզեց, որ՝

ա/ ավանդական նյութին տիրապետում են 60-100 սեռա-տարիքային խմբի բանասացները,

բ/ քնարական երգերի, հատկապես խաղիկների հիմնական կրողներն են կին բանասացները,

գ/ բանասացների ռեպերտուարը կայուն է, առկա է նախասիրու-

թյան պարզան,

դ/ ռեպերտուարի ծևավորման գործում նշանակալից դեր է խաղում բանասացի գրագիտությունը,

ե/ բանահյուսական որոշ ժանրերի / արձակ-պատմողական տեսակներ/ կենցաղավարումը կապված է հավաքատեղիների ավանդույթի հետ:

4. Մեր կողմից երեք տարվա ընթացքում գրանցվել են տարբեր ժանրերի բանահյուսական նյութեր՝ հեքիաթներ / 54 միավոր/, հանելուկներ / 85-90 միավոր/, անեկդոտներ-զրույցներ / 36 միավոր/, խաղիկներ /70 միավոր/, օրհնանքներ / 37 միավոր/, երգեր/աշուղական, կենցաղային, սիրո, եղերերգ, 25 միավոր/, սիրավեպ / 4 միավոր/, ինչպես նաև ծեսեր, սովորույթներ, հուշապատումներ, բանաձևային միավորներ, անեծքներ և այլն:

5. Բանահյուսական նյութի նախնական քննությունից հետևում է , որ՝

ա/ ավանդական բանաձևային և չափածո ժանրերը խիստ կայուն են,

բ/ երգի տեսակներում հնին զուգահեռ ստեղծվում են նոր մոտիվներ / հատկապես կենցաղային երգերում/,

գ/ հեքիաթներում ի հայտ են գալիս նորամուծություններ/կապված լեզվի, կենցաղի փոփոխության հետ, անցումը հրաշապատումից իրապատումի/,

դ/ հեքիաթային որոշ սյուժեներ ներկայացվում են որպես իրապատում հուշեր և, ընդհակառակը՝ իրական հուշապատումները որպես հեքիաթներ:

Ժաննա Խուրշուդյան

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ
/ ըստ 1972- 79թթ. գործուղման արդյունքների/

1. Մարտակերտը /պատմական Ջրաբերդը, Ծարի և վերին Խաչենի մի մասը/ տարածքով և հայաբնակ գյուղերի քանակով/56/ Լեռնային Ղարաբաղի ամենամեծ շրջանն է: Այն ունի հարուստ պատմական անցյալ և հուշարձաններ / Գանձասար, Երից Մանկաց վանք, Խոթավանք,Խաթրավանք, Մեխիս, Աստղաբլուր, Կաչաղակաբերդ և այլն/: Այստեղ են գտնվում մարզի ամենաբարձր լեռնագագաթները / Մռով, Քիրս/ և ամենամեծ գետը / Թարթառ/:

Բնակչության մեծ մասը տեղացի է, մի քանի գյուղեր վերաբնակեցված են Պարսկահայքից, Գանձակից և Ղարաբաղի մյուս շրջաննե-